« 12 » հոկտեմբեր 2026թ. N 5935 - Ա

«ՈՐՈՎԱՅՆ 360°. ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Հոկտեմբերի 19-նոյեմբեր 5, 2026թ., շարունակաբար, առցանց («Զում» հարթակ)

«Լեգալմեդ» ՍՊԸ

- Թիրախային լսարան՝ աղեստամոքսաբաններ և լյարդաբաններ, ռադիոլոգներ, կլինիկական լաբորատոր ախտորոշման մասնագետներ, որովայնային վիրաբույժներ, ներզատաբաններ, ուռուցքաբաններ, վարակաբաններ, ընտանեկան բժիշկներ, թերապևտներ, անհետաձգելի օգնության բժիշկներ, անեսթեզիոլոգներ և ինտենսիվ թերապևտներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ մինչև 50 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 21 տեսական կրեդիտ.
  դասավանդողներ Հայկ Մանասյանին՝ ՇՄԶ 21 տեսական կրեդիտ, Թերեզա Պողոսյանին՝ ՇՄԶ 21 տեսական կրեդիտ
- Կոնտակտ 091241515

Օր 1՝ հոկտեմբեր 19		
3 ժամ	**Պրեամբուլա և մեթոդաբանություն** • Որովայնի խոռոչի հիվանդությունների կլինիկական դրսեվորումները, ֆիզիկալ, լաբորատոր և գործիքային քննությունների, մասնավորապես ուլտրաձայնային հետազոտության սահմանափակումները: • Երբ դիմել լրացուցիչ գործիքային մեթոդների (ՄՌՏ/ԿՏ): • Ամենօրյա քեյսերի քննարկում և հարցուպատասխան:	Հայկ Մանասյան / Թերեզա Պողոսյան
Օր 2՝ հոկտեմբեր 21		
3 ժամ	**Լյարդի ցիռոզ, լյարդի նորագոյացություններ և պորտալ համակարգ:** • Լյարդի բարորակ ու չարորակ ուռուցքներ, պորտալ թրոմբոզներ: • Հեմանգիոմաների, ադենոմաների, հեպատոցելյուլյար քաղցկեղի և մետաստազների կլինիկական ընթացքը, հիմնական բարդությունները: • Սուր և քրոնիկ պորտալ թրոմբոզների ախտորոշում և հեմոդինամիկ հետևանքներ: • Սոնոգրաֆիկ պատկերի գնահատում և օրվա քեյսերի վերլուծություն:	Հայկ Մանասյան / Թերեզա Պողոսյան
Օր 3՝ հոկտեմբեր 23		
3 ժամ	**Լեղարտադրող համակարգ, խոլեստազ և խոլանգիտներ** • Լեղուղիների հիվանդություններ, բիլիար և սկլերոզացնող խոլանգիտներ, ՄՌՏ-խոլանգիոգրաֆիա:	Հայկ Մանասյան / Թերեզա Պողոսյան

	• Խոլեցիստիտների, խոլեդոխոլիթիազի, բիլիար և առաջնային սկլերոզացնող խոլանգիտի կլինիկական դրսևորումներն ու բուժական տակտիկան: • ՄՌՏ-խոլանգիոգրաֆիայի առավելությունները սոնոգրաֆիայի համեմատ: • Քեյսերի քննարկում:	
Օր 4՝ հոկտեմբեր 26		
3 ժամ	**Ենթաստամոքսային գեղձի պաթոլոգիաներ** • Պանկրեատիտներ, ենթաստամոքսային գեղձի ուռուցքային և ոչ ուռուցքային հիվանդություններ: • Սուր և քրոնիկ պանկրեատիտների բարդությունների կլինիկական , լաբորատոր և գործիքային քննությունները: • Վիզուալիզացիայի մեթոդները, դրանց նախընտրությունը: • Պանկրեասի ադենոկարցինոմայի և նեյրոէնդոկրին ուռուցքների ախտորոշիչ փուլերը: • Սոնոգրաֆիկ տվյալների կլինիկական մեկնաբանություն և հարցուպատասխան:	Հայկ Մանասյան / Թերեզա Պողոսյան
Օր 5՝ հոկտեմբեր 28		
3 ժամ	**Փայծաղ և աղիների ուռուցքներ** • Փայծաղի գոյացություններ, հաստ և բարակ աղիների չարորակ նորագոյացություններ: • Փայծաղի տրավմաների, ինֆարկտների և գոյացությունների կլինիկական նշանակությունը: • Աղիների ուռուցքային պրոցեսների վաղ ախտորոշում, կլինիկական սիմպտոմատիկա և ուլտրաձայնային արտացոլում: • Ամենօրյա քեյսերի վերլուծություն:	Հայկ Մանասյան / Թերեզա Պողոսյան
Օր 6՝ հոկտեմբեր 30		
3 ժամ	**Աղիների բորբոքային և իշեմիկ հիվանդություններ** • Կրոնի հիվանդություն, խոցային կոլիտ, իշեմիկ կոլիտ, դրանց դիֆերենցիալ դիագնոստիկան, կլինիկական ընթացքը, սրացումների բուժական մոտեցումները: • Ուլտրաձայնային հետազոտության դերը հիվանդության ակտիվության գնահատման գործում:	Հայկ Մանասյան / Թերեզա Պողոսյան
Օր 7՝ նոյեմբեր 3/5		
3 ժամ	• Լյարդի, ենթաստամոքսային գեղձի և լեղուղիների ախտաբանությունների պատկերային ախտորոշում: • Ստամոքսաղիքային տրակտի լուսանցքային օրգանների ախտաբանությունների պատկերային ախտորոշում: • Վիրխովի ավշային հանգույց. պատկերային ախտորոշում և կլինիկական նշանակություն: • Կուրսի ամփոփում և վերջնական քննարկում:	Հայկ Մանասյան / Թերեզա Պողոսյան